Հաստատում եմ
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
Ռ.Սարգսյան

12 սեպտեմբերի 2025թ.
/01 հունիսի 2022թ. հաստատված, 2023թ. փոփոխված կարգի փոփոխություն /

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ, ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՁևԱՎՈՐՄԱՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՁևԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ

1.Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը կարգավորում է ուսանողների գիտելիքների ընթացիկ, ամփոփիչ ստուգման, գնահատման գործընթացը:
2. Սույն կարգը տնօրենի ներկայացմամբ հաստատում է տնօրինական խորհուրդը:
3.Կարգը կազմելիս հիմք են ընդունվել ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի կանոնադրությունը, ուսանողի ուսումնառության պայմանագիրը, քոլեջի զարգացման ծրագիրը, պետական կրթական չափորոշիչները, ուսումնական պլանները և այլ իրավական ակտեր:
4. Ուսանողների գիտելիքների ընթացիկ, ամփոփիչ ստուգման, գնահատման կարգը ներքին իրավական ակտ է:
5.Սույն կարգն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

2. Ուսանողների գիտելիքների, կարողությունների գնահատումը

Քոլեջում գործում են ուսանողների գիտելիքների, կարողությունների գնահատման հետևյալ տեսակները.

2.1. ուսանողների գիտելիքների, կարողությունների ընթացիկ գնահատում,
2.2. տնօրինական գրավոր աշխատանքի գնահատում,
2.3. մոդուլի ամփոփում /ուսումնառության արդյունքների գնահատում/:
2.4. կիսամյակային ամփոփիչ գնահատում,
2.5. տարեկան ամփոփիչ գնահատում,
2.6. ուսումնական տարվա առաջադիմության ձևավորում
2.7. ավարտական ամփոփիչ գնահատում /դիպլոմի ներդիրի գնահատականների ձևավորում/
2.8 գերազանցության դիպլոմի հավակնորդի որոշումը

2.1 Ուսանողների գիտելիքների, կարողությունների ընթացիկ գնահատում

2.1.1 Ուսանողի գիտելիքների, կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատումը նպատակ ունի միջին մասնագիտական կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջների, ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման ու վերահսկման մոտեցումների և մեթոդների հիման վրա լուծելու հետևյալ խնդիրները.
ա/ ուսումնական գործունեության արդյունքում ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ համակարգված տեղեկատվության հավաքագրումը,
բ/ կրթության որակի բարելավումը և յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանումը, ակտիվացումը, շարունակաբար զարգացումը, կրթության որակի վերահսկումը,
գ/ շարունակաբար և ըստ փուլերի սովորողի կողմից պետական չափորոշչով ամրագրված բովանդակային բաղադրիչների յուրացման աստիճանի ստուգումն ու գնահատումը,
դ/ սովորողի անձնային որակների ձևավորումն ու վարքագծի կարգավորման նպաստումը, սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը:
ե/ մոդուլային ուսուցման դեպքում ուսումնառության արդյունքի գնահատման հիմք է ընդունվում ուսանողի աշխատանքի առարկայական արդյունքը՝ <<անցել է>>կամ <<չի անցել>>:
2.1.2 Գիտելիքների ստուգումն իրականացվում է նաև միավորային գնահատմամբ: Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն պետական չափորոշչի:

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են 1-ից մինչև 10 ամբողջ թվերով արտահայտվող միավորային սանդղակով: Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման սանդղակը և միավորների բնութագրիչները սահմանվում են ըստ հավելված 1-ի: Միավորային գնահատումն իրականացվում է բանավոր, գրավոր և գործնական եղանակներով:
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների գնահատումն ըստ անհրաժեշտության իրականացվում է անհատական ուսուցման պլանի հիման վրա (ԱՈւՊ):
2.1.3 Ընթացիկ գնահատումն իրականացվում է դասախոսի կողմից յուրաքանչյուր դասի համար կազմված գնահատման չափանիշով: Գնահատման չափանիշը ներառում է գնահատման հետևյալ բաղադրիչները՝ տվյալ դասին ուսանողի կողմից կատարվող աշխատանքի բովանդակությանը համապատասխան /բանավոր,գրավոր,գործնական / յուրաքանչյուր քայլին տրվող առավելագույն միավորը /միավորները/: 10 միավորային սանդղակից բացի կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ: Այդպիսի դեպքերում ստացված միավորը վեր է ածվում 10 միավորային սանդղակի: Օրինակ՝ եթե տվյալ դասի գնահատման չափանիշով ստուգման առավելագույն միավորը 40 է, ուսանողը գնահատվել է 30 միավոր, ուսանողի գնահատականը կլինի 8:
2.1.4 Ոչ մոդուլային առարկաների տեսական կամ կոմբինացված պարապմունքների մեկ կիսամյակում **բանավոր հարցման** քանակը պետք է լինի տվյալ առարկայի կիսամյակային ժամաքանակի առնվազն 10%-ին հավասար: Օրինակ՝ եթե կիսամյակի ընթացքում առարկայի ժամաքանակը 48 ժամ է, 10%-ը կկազմի 4,8≈5, կիսամյակն ամփոփելու համար յուրաքանչյուր ուսանող պետք է ունենա առնվազն 5 գնահատված հարցում: Պահանջվող հարցումների քանակից քիչ գնահատական լինելու դեպքում, կիսամյակը չի ամփոփվում:
2.1.5 Յուրաքանչյուր գործնական պարապմունքին բոլոր ուսանողները գնահատվում են տվյալ պարապմունքի ժամին:

Եթե գործնական պարապմունքից ուսանողը գնահատվել է անբավարար,ապա դասախոսը անբավարար գնահատականը նշանակում է մատյանում՝ կոտորակով, համարիչում, իսկ գնահատականի վերահանձնումը կատարվում է ուսումնական մասից տրված ուղեգրով՝ (ուղեգիրը տրվում է անվճար) հաջորդ պարապմունքին, դասախոսի տված հանձնարարություններով: Դասախոսը դասամատյանի տվյալ առարկայի էջում կոտորակի հայտարարում նշում է վերահանձնման գնահատականը (օրինակ՝ 2/5):
2.1.6 Ուսումնառության արդյունքի գնահատումն իրականացվում է գնահատման թերթիկներով (հավելված 2), որտեղ նշվում են գնահատման Քայլերը/առաջադրանքները/: Գնահատման առաջադրանքները կազմվում են՝ հիմք ընդունելով մոդուլային ուսումնական ծրագրում յուրաքանչյուր արդյունքի գնահատման միջոցը: Գնահատման թերթիկն ուսանողին տրվում է գնահատումն անցկացնելու ժամանակ: Առաջադրանքը կատարելուց հետո ուսանողն այն հանձնում է դասախոսին: Դասախոսը թեթիկում նշում է <<անցել է>> կամ <<չի անցել>>: Առաջադրանքի կատարման արդյունքը գրանցվում է անցել է,եթե կատարվել է առաջադրանքի առնվազն թույլատրելի 70 %-ը: Արդյունքի գնահատում չանցնելու դեպքում իրականացվում է կրկնակի հանձնում: Գնահատման թերթիկը պահպանվում է դասախոսի մոտ:
Յուրաքանչյուր մոդուլի ավարտից հետո ուսումնական մաս է ներկայացվում մոդուլի յուրացման թերթիկը:

2.2 Տնօրինական աշխատանքի գնահատումը

2.2.1 Տնօրինական աշխատանքի նպատակն է վերահսկել ուսանողների ընթացիկ գնահատումը, գնահատման անաչառությունը:
2.2.2 Տնօրինական աշխատանքը իրականացվում է թեստերի կամ առաջադրանքների միջոցով՝ գրավոր: Թեստերը/ առաջադրանքները/, դրանց քանակը, տարբերակները և գնահատման չափանիշները կազմվում են համապատասխան մասնագետների կողմից,քննարկվում

ամբիոններում և հաստատվում ուսումնամեթոդական խորհրդի կողմից, կնիքվում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից:

2.2.3 Տնօրինական աշխատանքների նախատեսված առարկաների/մոդուլների ցանկը և ժամանակացույցը կազմվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ՝ համապատասխան ամբիոններում:

2.2.4 Տնօրինական աշխատանքները հանրակրթական առարկաներ համար պարտադիր են /մասնագիտական մոդուլների համար ցանկալի/ և ստացած գնահատականը վճռորոշ դեր է խաղում կիսամյակային ամփոփման ժամանակ:

2.2.5 Տնօրինական աշխատանքը տրվում է տվյալ առարկայի տեսական (տեսական պարապմունքների բացակայության դեպքում՝գործնական) նախավերջին պարապմունքին :

2.2.6 Տնօրինական աշխատանքը տրվում է ամբիոնի վարիչի և վերահսկվում մեթոդիստի կողմից:

2.3 Մոդուլի ամփոփում /ուսումնառության արդյունքների գնահատում/

Մոդուլն ամփոփում է դասախոսը՝ ուսումնական մասի կողմից կազմված մոդուլի ամփոփման ժամանակացույցին համապատասխան ՝ մոդուլի յուրացման ամփոփ թերթում (հավելված 3), որտեղ նշվում են մոդուլի բոլոր արդյունքները՝ գնահատման քայլերով, գնահատման արդյունքով և մոդուլի ամփոփման արդյունքը: Մոդուլի յուրացման գնահատման ամփոփ թերթը հանձնվում է ուսումնական մաս:

2.4 Կիսամյակային ամփոփիչ գնահատում

2.4.1 Յուրաքանչյուր առարկայից/մոդուլից/ կիսամյակը ամփոփվում է ուսումնական պլանով նախատեսված ձևով՝ ստուգարք /ստ./ կամ տարբերակված գնահատում կամ ամփոփիչ գնահատում:

Ամփոփիչ գնահատականը դասախոսը գրանցում է դասամատյանում, առարկային հատկաց ված էջում, ստուգման գրքույկում, կուրսղեկը՝ դասամատյանի «Հանրագումարային գնահատականների ամփոփիչ տեղեկագիր» էջում և ամփոփագրում:

2.4.2 Առարկայի/մոդուլի/ կիսամյակը ամփոփվում է «ստուգված», եթե ուսանողը ունի համապատասխան քանակով դրական գնահատականներ:

2.4.3 Առարկայի կիսամյակային տարբերակված գնահատականը ձևավորվում է հետևյալ կերպ.

ա/ տեսական պարապմունքի կիսամյակային գնահատում

- Եթե տնօրենական գրավոր աշխատանք չի նախատեսված, ապա հաշվվում է կիսամյակի ընթացքում տեսական կամ կոմբինացված պարապմունքին ուսանողի ստացած գնահատականների միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով,
- ամփոփիչ գնահատականը գրանցվում է առարկայի տեսական պարապմունքին հատկացված էջում ՝ առանձին սյունակով,
- եթե նախատեսված է տնօրենական գրավոր աշխատանք, ապա հաշվվում է տեսական պարապմունքին կիսամյակի ընթացքում ուսանողի ստացած գնահատականների միջին թվաբանականի և տնօրենական գրավոր աշխատանքի գնահատականի միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով:

Օրինակ. Կիսամյակի ընթացքում ուսանողը ստացել է՝ 5, 5, 6, 6, 4 , թվաբանական միջինը կլինի՝ 5,2≈5, տնօրենական աշխատանքից ստացել է <<6>>, տեսական պարապմունքի կիսամյակային գնահատականը կլինի՝ (5+6):2=5,5≈6

բ/ գործնական պարապմունքի կիսամյակային գնահատում

- հաշվվում է գործնական պարապմունքին կիսամյակի ընթացքում ուսանողի ստացած գնահատականների միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով ,
- ամփոփիչ գնահատականը գրանցվում է առարկայի գործնական պարապմունքին հատկացված էջում՝ առանձին սյունակով, ինչպես նաև փոխանցվում է տեսական պարապմունքին հատկացված էջ և գրանցվում առանձին սյունակով:
- գործնական պարապմունքին տնօրենական աշխատանքի առկայության դեպքում ամփոփիչ գնահատականը հաշվվում է կիսամյակի ընթացքում ուսանողի ստացած գործնական պարապմունքի գնահատականների միջին թվաբանականի և տնօրենական գրավոր աշխատանքի գնահատականի հանրագումարի միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով:

Օրինակ. Կիսամյակի ընթացքում ուսանողը ստացել է՝ 5,5,6,6,4, թվաբանական միջինը կլինի՝ 5,2≈5, գործնական պարապմունքի գնահատականների միջին թվաբանականը կլինի <<5>>: Եթե տրվել է տնօրենական աշխատանք և ստացել է <<6>>, գործնական պարապմունքի կիսամյակային գնահատականը կլինի (5+6):2=5,5≈6

գ/ առարկայի կիսամյակային ամփոփիչ գնահատականի ձևավորումը

- Եթե առարկայի տեսական կամ գործնական պարապմունքներից որևէ մեկը գնահատված է գերազանց, մյուսը՝ լավ, ապա ընդհանուր գնահատականը ամփոփվում է լավ:
- Եթե առարկայի գործնական պարապմունքների / եթե գրանցվում է տեսական պարապմունքներից առանձնացված ձևով/ ժամերի քանակը 20 ժամից պակաս է, ապա առարկայի կիսամյակային գնահատականը ձևավորվում է տեսական և գործնական պարապմունքներից ստացած գնահատականների միջին թվաբանականով և գրանցվում է դասամատյանի տեսական պարապմունքին հատկացված էջում՝ առանձին սյունակում:
- Եթե առարկայի տեսական կամ գործնական պարապմունքներից / եթե դրանք գրանցվում են առանձնացված ձևով/ որևէ մեկը ամփոփվում է անբավարար, կամ ուսանողը գործնական պարապմունքից ունի չվերահանձնած անբավարար գնահատական, ապա կիսամյակային գնահատականը ամփոփվում է անբավարար:

2.4.4 Մոդուլի կիսամյակային տարբերակված գնահատականը ձևավորվում է հետևյալ կերպ.

ա/ եթե տվյալ մոդուլը ունի և՛ տեսական, և՛ գործնական պարապմունքներ, դրանց գրանցման համար դասամատյանում հատկացվում են ընդհանրացված էջեր և հաշվվում է տեսական և գործնական պարապմունքների գնահատականների միջին թվաբանականը մոտարկվում ամբողջ թվով՝ առանձին սյունակում:

բ/ եթե նախատեսված է տնօրինական գրավոր աշխատանք, ապա հաշվվում է կիսամյակի ընթացքում տեսական և գործնական պարապմունքներին ուսանողի ստացած գնահատականների միջին թվաբանականի և տնօրենական գրավոր աշխատանքի գնահատականի հանրագումարի միջինը և մոտարկվում ամբողջ թվով:

գ/ ամփոփիչ գնահատականը գրանցվում է մոդուլի տեսական և գործնական պարապմունքների համար հատկացված ընդհանուր էջում ՝ առանձին սյունակով,

2.4.5 Եթե ուսանողն ունի չլրացված բացակայություն, ապա կիսամյակն ամփոփվում է չգնահատված, այդ դեպքերում ուսանողին թույլատրվում է կիսամյակն ամփոփել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշական քոլեջի ուսանողների ակադեմիական պարտքերի մարման կարգի համաձայն:

2.4.6 Տարբերակված ստուգարքի անցկացման նպատակը ձևավորվող ամփոփ գնահատականի վերահաստատումն է կամ փոփոխությունը, այն ուսանողակենտրոն է և հիմնականում փոփոխության է ենթարկվում ուսանողի պահանջով ամփոփ գնահատականը փոխելու նպատակով կամ դասախոսի նախաձեռնությամբ:

2.5 Տարեկան ամփոփիչ գնահատականի ձևավորումը

2.5.1 Տարեկան ամփոփիչ գնահատականը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին և հիմք է հանդիսանում ավարտական ամփոփիչ /**դիպլոմի ներդիրի/ գնահատականների ձևավորման համար:**

2.5.2 Եթե տվյալ ուսումնական տարում առարկան/մոդուլը քննական չէ և ուսումնասիրվում է միայն մեկ կիսամյակում, ապա տարեկան գնահատական է համարվում կիսամյակային գնահատականը:

2.5.3 Եթե տվյալ առարկան ուսումնասիրվում է ուսումնական տարվա I և II կիսամյակներում և քննական չէ, ապա տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով և այն մոտարկվում է ամբողջ թվով: Եթե կիսամյակային գնահատականների տարբերությունը մեկ միավոր է, ապա տարեկան գնահատական է համարվում վերջին կիսամյակի գնահատականը/բացառությամբ լավ և գերազանցի դեպքում/:

Օրինակ. Եթե I կիսամյակի ամփոփիչ գնահատականը <<6>> է, իսկ II կիսամյակի ամփոփիչ գնահատականը <<5>> է, ապա տարեկան գնահատականը կլինի <<5>>:

2.5.4 Եթե քննական առարկան ավարտվում է մեկ կիսամյակում, քննական գնահատականը համարվում է որոշիչ:

Օրինակ. Եթե կիսամյակային գնահատականը <<6>> է, իսկ քննական գնահատականը՝ <<7>>, ավարտական ամփոփիչ գնահատականը կլինի <<7>>:

Եթե կիսամյակային և քննական գնահատականների տարբերությունը 2 միավորից ավել է, ապա ամփոփումը կատարվում է մոտարկման սկզբունքով:

2.5.5 Եթե ուսումնական տարում տվյալ առարկան/մոդուլը/ քննական է և առաջին կիսամյակում քննություն է, իսկ երկրորդում քննություն չէ, կամ, եթե ուսումնական տարում տվյալ առարկան/մոդուլը քննական է և առաջին կիսամյակում քննություն չէ, իսկ երկրորդում քննություն է միայն երկրորդ կիսամյակում ուսումնասիրած նյութի ծավալով, ապա տարեկան գնահատականը ձևավորվում է առաջին կիսամյակի կիսամյակային / ամփոփիչ/ և երկրորդ կիսամյակի կիսամյակային ամփոփիչ գնահատականների միջին թվաբանականով և այն մոտարկվում է ամբողջ թվով /բացառությամբ լավ և գերազանցի դեպքում/:

2.5.6 Եթե ուսումնական տարում տվյալ առարկան/մոդուլը քննական է և առաջին կիսամյակում քննություն չէ, իսկ երկրորդում քննություն է տարեկան ուսումնասիրած նյութի ամբողջ ծավալով,ապա տարեկան գնահատական է համարվում քննական գնահատականը:Եթե քննական գնահատականի և վերջին կիսամյակային գնահատականի տարբերությունը 2 – ից ավել է, ապա տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակների և քննական գնահատականների միջինացման, մոտարկման սկզբունքով:

2.5.7 Եթե ուսումնական տարում տվյալ առարկան քննական է, և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակներում քննություն է, ապա տարեկան գնահատականը ձևավորվում է առաջին և երկրորդ կիսամյակների կիսամյակային ամփոփիչ գնահատականների միջին թվաբանականով և այն մոտարկվում է ամբողջ թվով: Եթե կիսամյակային ամփոփիչ գնահատականների տարբերությունը մեկ միավոր է, ապա տարեկան գնահատական է

համարվում վերջին կիսամյակի ամփոփիչ գնահատականը /բացառությամբ լավ և գերազանցի դեպքում/:

2.5.8 Սույն կարգի (2.5.1-2.5.4) ենթակետերում նշված դեպքերում, եթե միջինացվող գնահատականներից մեկը լավ է, մյուսը գերազանց, ապա տարեկան գնահատականը համարվում է լավ:

2.5.9 Տարեկան ամփոփիչ գնահատականները տեղադրվում են տարեկան ամփոփիչ տեղեկագրում: Տեղեկագիրը լրացվում է կուրսղեկների կողմից, ստուգվում ուսումնական մասի կողմից:

2.5.10 Տարեկան գնահատականները ուսումնական մասում անց են կացվում տարեկան առաջադիմության ամփոփիչ տեղեկագիր:

2.5.11 Համալիր, ինչպես նաև հանրակրթական ավարտական պետական քննական գնահատականները հաշվարկվում են որպես առանձին գնահատականներ:

2.6 ՈՒսումնական տարվա /կիսամյակի/ առաջադիմության ձևավորում

2.6.1 ՈՒսումնական տարվա/կիսամյակի/ առաջադիմությունը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա/կիսամյակի/ ավարտին և նպատակ ունի գնահատել սովորողների ուսումնական տարվա/կիսամյակի/ ուսումնառության որակական պատկերը, ինչպես նաև սահմանված կարգով որոշել փոխատեղումների, ուսման վճարի փոխհատուցման չափերը և կրթաթոշակի տրամադրումը:

2.6.2 Առաջադիմությունը որոշվում է նախորդ ուսումնական տարվա/կիսամյակի/ գնահատականների հիման վրա՝ միջին թվաբանականի 0,01 – ի ճշտությամբ: Հաշվարկվում է ուսումնական տարվա/ կիսամյակի/ ընթացքում բոլոր կիսամյակային և քննական գնահատականների միջին թվաբանականը:

Համալիր, ինչպես նաև հանրակրթական ավարտական պետական քննական գնահատականները հաշվարկվում են որպես առանձին գնահատականներ:

2.6.3 Ուսանողների փոխատեղումների, ուսման վճարի փոխհատուցման չափերի որոշման և կրթաթոշակի տրամադրման համար կուրսղեկների, ուսումնական մասի կողմից կազմվում է ուսանողների ուսումնական տարվա/ կիսամյակի/ առաջադիմության տեղեկագիր, որը ստուգվում է ուսումնական մասի ուս.գծով փոխտնօրենի կողմից և ձևավորվում է առաջադիմության ամփոփիչ տեղեկագիր:

2.7 Ավարտական ամփոփիչ գնահատում /դիպլոմի ներդիրի գնահատականների ձևավորում/

2.7.1 Առարկայի /մոդուլի/ ավարտական ամփոփիչ գնահատականը ձևավորվում է ուսումնառության ընթացքում տվյալ առարկայի/մոդուլի տարեկան գնահատականների միջին թվաբանականով՝ սույն կարգի 2.3, 2.6 կետերում նշված սկզբունքներով:

2.7.2 Սույն կարգի 2.5.7-րդ ենթակետում նշված դեպքում, եթե միջինացվող գնահատականներից մեկը լավ է, մյուսը գերազանց, ապա ավարտական ամփոփիչ գնահատականը համարվում է լավ:

2.7.3 Ավարտական ամփոփիչ գնահատականը առաջին կուրսից սկսված՝ յուրաքանչյուր կիսամյակի և ուսումնական տարվա ավարտից հետո ուսումնական մասում/ուսումնական մասի քարտուղարի կողմից/ անց է կացվում ամփոփիչ տեղեկագիր:

2.7.4 Ձևավորված վերջնական գնահատականներն անց են կացվում դիպլոմի ներդիր:
2.7.5 Միջնակարգ կրթության հանրակրթական ավարտական պետական քննական գնահատականները ներդիրում գրվում են առանձին:

2.8 Գերազանցության դիպլոմի հավակնորդի որոշումը

2.8.1 Մասնագիտական ուսումնական հաստատության շրջանավարտին, որը ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբերակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով, տրվում է գերազանցության դիպլոմ: (Հաշվարկվում են ուսումնառության ողջ ընթացքում բոլոր կիսամյակային և քննական գնահատականները):
2.8.2 Միջնակարգ հանրակրթական ավարտական պետական քննական գնահատականները մտնում են 75%-ի մեջ:
2.8.3 Ուսումնառության ընթացքում, վերահանձնման արդյուքով «գերազանց» կամ «լավ» գնահատական ստացած ուսանողներին գերազանցության դիպլոմ չի շնորհվում:

Հավելված 1

Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման սանդղակը և միավորների բնութագրիչները

Բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների գնահատում

1 միավոր – չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:
2 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
3 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
4 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
5 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
6 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
7 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

8 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ճանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել այն մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը:
9 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկատվությունը:
10 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում, հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել, ամփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկատվությունը:

Գնահատման սանդղակը և բնութագրիչները

Միավոր /Գնահատական/	**Գնահատման բնութագրիչները**
9-10 /Գերազանց/	Գիտելիքների և կարողությունների լիարժեք արդյունք
7-8 /Լավ/	Գիտելիքների և կարողությունների բարձր արդյունք՝ մասնակի թերացումներով
4-5-6 /Բավարար/	Գիտելիքների և կարողությունների ընդունելի մակարդակ՝ զգալի թերացումներով
1-2-3 /Անբավարար/	Գիտելիքների և կարողությունների անընդունելի մակարդակ
4--10 /Ստուգված/	Գիտելիքների և կարողությունների դրսևորման ընդունելի մակարդակ
1--3 /Չստուգված/	Գիտելիքների և կարողությունների դրսևորման անընդունելի մակարդակ

Միջնակարգ կրթության ավարտական պետական քննությունների արդյունքների գնահատման սանդղակ

<<Հայոց լեզու և գրականություն>>, <<Մաթեմատիկա>> և <<Հայոց պատմություն>> առարկաներից պետական ավարտական քննությունների արդյունքների գնահատման սանդղակ

Նախնական միավորը (0-50)	**Միավորը 20 միավորանոց համակարգում**
49-50	20
46-47-48	19
43-44-45	18
40-41-42	17
37-38-39	16
34-35-36	15
31-32-33	14
28-29-30	13
25-26-27	12
22-23-24	11
19-20-21	10
16-17-18	9
14-15	8
12-13	7
10-11	6
8-9	5
6-7	4
4-5	3
2-3	2
1	1
0	0

Հավելված 2

Գնահատման թերթիկ

Ուսանողի ազգանուն ,անուն _____
Մասնագիտությունը _____ Խումբը_____
Մոդուլի անվանումը _____
Ուսումնառության արդյունք_____

1.Գնահատման առաջադրանք /թեստ, գործնական աշխատանք, հաշվարկների առաջադրանք, .../

2. Գնահատման առաջադրանք

Անցել է ☐

Չի անցել ☐

Դասախոս՝ _____ / /
Ամսաթիվ _____

Հավելված 3

Մոդուլի յուրացման գնահատման ամփոփ թերթ

Ուստարի_____
Մոդուլի անվանումը_____
Մասնագիտությունը_____
Խումբը_____

N	Ազգանուն,անուն	Ուսումնառության արդյունք 1						Ուսումնառության արդյունք 2						Ուսումնառության արդյունք 3						Մոդուլի ամփոփում	
		Գնահատման քայլ			Կրկն.հանձ		Վերջն.	Գնահատման քայլ			Կրկն.հանձ		Վերջն.	Գնահատման քայլ			Կրկն.հանձ		Վերջն.	Անցել է	Չի անցել
		1	2	3	1	2		1	2	3	1	2		1	2	3	1	2			
1																					
2																					
3																					
4																					
5																					
6																					

Գնահատման քայլերի մասին.

Դասախոս _____ <<_____>>_____ 20 թ.